ԱՐԵՏԱՓԵՐ

«ԱՀԱՒ ԵՒ ՁԵԶԻ ՄԵԾ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԻՍ ԿՈՒՏԱՄ» : ՂՈՒԿ. Բ. 10

ՀԱՏՈՐ 25 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ· 5 ՅՈՒՆԻՍ , 1872 · ԹԻՒ 23

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ կառավարութիւնը : — Հնդկաստանցի կանայք : — Աւետաբերի 21 Թուոյն մէջ հրատարակուած խնդրոյն պատասխանը : — Հրէական պատմութիւն մը : — Թշնամին ինչպէս զինաթափ ընելու է : — Զինացի քարոզչին ճառը : — Քաղաքական լուրեր : — Ծանուցում : —Շուկայի գիներ :

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԱՐԴԵՆ յուշ ըրեցաք Նոր Կաթոլիկներին վկայութեամբը թէ Առաքելոց հաստատած եկեղեցիներուն մէջ 2 տեսակ պաշտօնեաներ միայն կային , երիցունք որ եպիսկոպոս ալ կը կոչուէին , և Սարկաւագունք : Այս պարզ կարգադրութիւնը տևեց եկեղեցեաց մէջ Առաքեալներէն ետքը տևելի քան մէկ դար : Տերտուղիանոս (220 ին) առաջին անգամ կը յիշէ եկեղեցւոյ պաշտօնէից ուրիշ կարգ մը , այսինքն՝ Ընթերցողաց կարգը , և Կիպրիանոս (250 ին) կը խօսի Ընթերցողաց և Կիսասարկաւագաց վրայ , որոնք Սարկաւագներէն ստորին կը համարուէին , մինչ Երիցունք կամ Եպիսկոպոսունք նոյն Սարկաւագներէն վերադոյն էին ստիճանաւ : Ապացոյց չկայ թէ առաջին 2 դարերուն մէջ եկեղեցեաց հոգևոր առաջնորդաց այսինքն երէցներու կամ Եպիսկոպոսներու մէջտեղ կարգի տարբերութիւն մը կար : Եկեղեցեաց այս պաշտօնեաները երբեմն , Հրէից սովորութեանը համեմատ , կը կոչուէին Երիցունք (ծերք) կամ, ըստ նոյ սովորութեանը համաձայն , Եպիսկոպոսք , այսինքն տեսուչք , բայց անոնց մէջ կարգի տարբերութիւն չկար : Երկրորդ դարուն դէպ ի վերջերը մեծամեծ քաղաքաց եկեղեցիներուն Երէցները կամ Եպիսկոպոսներն ընդհանրապէս գեղերու կը ղրկէին աւելի տաղանդաւոր մարդիկ ըլլալով , և սովորաբար նախագահ ընտրուելով կղերական ժողովներու մէջ , կամաց կամաց տեսակ մը իշխանութիւն կամ ազդեցութիւն ստացան ուրիշ Երիցանց կամ Եպիսկոպոսաց վրայ : Ակի երրորդ դարուն սկիզբը յառաջ եկաւ կղերին պաշտօնապէս երկու , բարձր և ստորին , կարգի բաժանումը , և այնուհետև սկսաւ Եպիսկոպոս անունը բարձրագոյն կարգին սեպհականուիլ իսկ Երէց կամ Քահանայ անունը ստորին կարգին : Երանոսի , Ոսկեբերանի և Հերոնիմոսի պէս մատենագրաց վկայութենէն յայտնի է թէ կարգի այս բաժանումը չկար իսկզբան, և հետզհետէ մուտ գտաւ յետնադոյն դարերու մէջ :

Հերոնիմոս որ Դ դարուն վերջին կիսուն մէջ ծագեցաւ՝ Տիտոսի Թղթոյն վրայ գրած մեկնութեանը մէջ եպիսկոպոսական պաշտօնին որպիսութեանն ու ծագմանը վրայ խօսելով կ'ըսէ . « Նախնեաց (այսինքն՝ նախնի Քրիստոնէից) մէջ Երէց և Եպիսկոպոս միևնոյն էին , յետոյ կամաց կամաց սովորութիւն եղաւ որ Երիցունք իրենց մէջէն ուրիշն ընտրելով միւսներուն վրայ տեսուչ կը դնէին » : « Այս պատճառաւ » , կը յարէ նոյն անձը , « ինչպէս որ Երիցունք գիտեն որ իրենք եկեղեցական սովորութեամբ միայն հպատակ են Եպիսկոպոսին , Եպիսկոպոսն ալ Թող գիտենայ թէ ինք Երէցներէն վեր է ըստ սովորութեան մանաւանդ՝ քան Տեառն մերոյ կարգադրութեամբը » :

Իսկզբան Եպիսկոպոս մը միայն տեսակ մը նախագահ էր եկեղեցական պաշտօնէից, բայց կամաց կամաց եկեղեցական գործոց վերին տեսչութիւնը և ձեռնադրելու իրաւունքն անոր միայն սեպհականուեցաւ : Ցետոյ նոյն իսկ Եպիսկոպոսաց մէջտեղ տարբերութիւն կամ զանազանութիւն մը մուտ գտաւ : Գաւառաց մայրաքաղաքներուն Եպիսկոպոսունք կոչուեցան Մետրապոլիտք , և երբեմն իրաւասութիւն ունէին գաւառին մէջ գտնուած ուրիշ Եպիսկոպոսաց վրայ : Իսկ Պատրիարք տիտղոսը տրուեցաւ անոնցմէ ոմանց որոնց իշխանութիւնն աւելի ընդարձակ էր : Ի վերջոյ ժամանակ անցնելով Հռոմի Եպիսկոպոսը Պապ կոչուելով արևմտեան եկեղեցւոյն գլուխը համարուեցաւ : Ուստի յայտնի է թէ եկեղեցւոյ կառավարութեան Եպիսկոպոսական կոչուած կերպը ոչ թէ , ինչպէս ոմանք կը պնդեն , Առաքեալներէն ունի իր ծագումը , այլ թէ Առաքելական ժամանակէն իբր 100 տարի ետքը սկսաւ , և ինչպէս որ կամաց կամաց մուտ գտաւ , այնպէս ալ կամաց կամաց զարգանալով հասաւ այն ձևին որ հիմա կը տիրէ Արևելեան եկեղեցեաց մէջ , և չափով մը նաև Եւրոպիոյ և Ամերիկայի եկեղեցիներէն ոմանց մէջ :

ՀՆԴԿԱՍՏԱՆՑԻ ԿԱՆԱՅՔ

Հաւանականաբար ուրիշ որ և իցէ երկրի մէջ կանանց վիճակն այնչափ խղճալի չէ որչափ Հնդկաստանի մէջ : Ընտանիքի մը համար դժբախտութիւն կը համարուի , երբ աղջիկ տղայ մը կը ծնանի , և հայրը շատ անգամ այս կարծեցեալ բեռէն և դժբախտութենէն ինք զինք կ'ազատէ՝ նորածին մանուկը սպաննելով բռնաբար կամ թունով և կամ, եթէ Անգղիական կառավարութենէն իբրև մարդասպան պատժուելէ կը վախնայ , տղան անգործման կը թողուի մինչև որ դժբախտ մանկիկն այն կերպով մեռնի : Երկրին սովորութիւնը կը պահանջէ որ կենդանի

պահուած աղջիկ տղայք ալ, որչափ կարելի է չուտով, ղրկրիւնակ իրենց 6 կամ 7 տարեկան հասակին, ամուսնացուելին։ Աղջկանց համար ամուսին գըտնել՝ իւրաքանչիւր տան սափրիչին պաշտօնն է։ Եթէ սափրիչ մը իր մտած եղած տուներէն մէկուն մէջ յարմար մանչ մը չի ճանչնար, ուրիշ սափրիչներէ կը խնդրէ այնպիսի պատանի մը որուն հետ կարենայ այն ինչ աղջիկը նշանուիլ։ Ընտանիք մը միշտ մեծ փութով կ'ընդունի այս նշանուելը, քանզի ամուրի աղջիկ մը չափահաս ըլլալէն ետքը տան մէջ ունենալը դժբախտութիւն համարուած է։ Նշանուելէն մէկ կամ երկու տարի ետքը ամուսնութիւնը կը կատարուի մեծ հանդիսութեամբ և փառաւոր կերպով։ Խնճոյք և տեսակ տեսակ զուարճութիւններ կը պատրաստուին մեծ ծախքով փեսին և երկու խնամի ընտանեաց երիկ մարդոց համար, հիւրեր ալ կը հրաւիրուին. իսկ հարսին և անոր կնիկ մարդ բարեկամներուն համար այնպիսի պատրաստութիւն մը դուն ուրեք կ'ըլլայ։ Հարսանեաց արարողութիւնը կը կատարուի հետևեալ կերպով։ Պրահմիններն, այսինքն Հնդկաց քահանաներն, իրենց սրբազան գիրքերէն որ Սանսքրիթ կոչուած հին լեզուով գրուած են՝ մաս մը կը կարդան, և կրակի մը բոլորտիքը երեք անգամ դառնալով հարսին և փեսային հանդերձներն իրարու հետ հանգուցիւ կը կապեն, և օղ մը կ'անցուննեն աղջկան քիթը. այսպէս անիկա կին կ'ըլլայ մանչուն որ աղջկանէն մէկ կամ երկու տարի մեծ ըլլալու է։

Հարսն իր երկանը տունը երթալէն ետքը իր կեանքին իբրև գերի կը նայուի, և տեսակ տեսակ լկտանաց, ծեծի անգամ ենթակայ կ'ըլլայ։ Եթէ պատահի որ աղջկան մը նշանածը կամ ամուսինը մեռնի, աղջիկն այնուհետև ուրիշի մը հետ չի կրնար ամուսնանալ, և մանկամարդ այրեայ մը ցուցուած վարմունքը չարագոյն է քան այրը ողջ եղող կնոջ մը ցուցուածը։ Անիկա իր մազերէն, ադամանդեայ զարդերէն, աղնիւ հանդերձներէն, և ամէն տեսակ զուարճութենէ կը զրկուի. ուտելու համար ալ ամէնէն գէշ կերակուրները կ'ընդունի։ Հին ատենը այրի կանայք իրենց սրանց դիականցը հետ կ'այրուէին. հիմա որ Անգղիոյ կառավարութիւնը կ'արգիլու այս սովորութիւնը, այրիներն արդարև չեն սպանուիր, բայց բոլոր իրենց ազգականներէն անարգուելու և լկտուելու մատնուած են։ Ինչպէս որ շատ անգամ հայրեր իրենց նորածին աղջիկ տղայք սպաննելով անոնց բեռէն կ'ազատեն զիրենք, այսպէս ընտանիքներ շատ անգամ այրեայ մը բեռէն ազատելու համար զանի կը թունաւորէն, և կ'ըսեն թէ հնտախտէ (քօլէրա) մեռաւ։ Հնդկաստանցի կանանց պատուոյ նայուած ատենը՝ անոնց ծերութեան ժամանակն է։ Հասարակաց գաղափարը երկրին սովորութիւնը կը պահանջեն որ անոնց տղայքը զանի պատուեն, և ամէնքը անոր հնազանդին. կինն ալ ան ատեն պատեհութիւն կը գտնէ շատ անգամ խստիւ վրէժ խնդրելու այն անձինքներէն որմէ որմէ առաջ նեղութիւն և վիշտ կրած էր։ Ա.յնուհետև այրը կ'ըլլայ կնոջը գերին, և կինը կ'իշխէ անոր վրայ, այնպէս որ կինը մեռնելէն ետքը այրը փոխանակ ցաւելու և սգալու՝ կ'ուրախանայ մանաւանդ անկէ ազատուելուն համար, և անոր դէմ ունեցած ատելութիւնը կը սկսի հրապարակաւ յայտնել։ Եթէ հարցուի թէ ինչու համար չի ցաւիր կնոջը մահուանը վրայ, թերևս պիտի պատասխանէ թէ, «Մ'իմէ մարդ հին կոչկի մը կորստեանը վրայ կը ցաւի՞»։

Անգղիոյ կառավարութիւնը շատ ջանք ըրած է կանանց վիճակը բարւոքելու Հնդկաստանի մէջ։ Բայց օրէնք և կարգադրութիւններ շատ քիչ օգուտ ունին երկրի մը մէջ ուր ընտանեկան դէպքերը հասարակաց աչքէն ծածկուած են, ինչպէս է Հընդկաստանի մէջ։ Աւետարանը միայն կրնայ իր լուսաւորիչ, ազնուացուցիչ և մխիթարիչ ազդեցութեամբը փոխել Հնդկաստանցի կանանց խիստ դառն վիճակը, հարց և ամուսնոց սորվեցնելով որ սիրով և քաղցրութեամբ վարուին կանանց հետ. և շատ ուրախալի բան մըն է որ հիմա այն երկրին մէջ Աւետարանը շատերուն ձեռքով կը քարոզուի, և թէ շատ քրիստոնեայ տիկնայք Հնդիկ ընտանիքներու մէջ իրենց բարի ազդեցութիւնը կը բանեցնեն։

ԱԻԵՏԱՐԵՐԻ 21 ԹՈՒՈՑՆ ՄԷՋ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԽՆԴՐՈՑՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հօրը կտակին համեմատ լիրաները տղոյը բաժնելու մասին դատաւորին կրած դժուարութիւնը սա բանէն յառաջ եկաւ որ, ամենևին թիւ մը առանց մնացորդի 3ի չի կրնար բաժնուիլ այնպէս որ բաժիններուն մէկը այն թուոյն կէսն ըլլայ, միւսն անոր $\frac{1}{3}$ը, և երրորդն՝ անոր $\frac{1}{9}$ը։ Եթէ այս կոտորակներն ընդհանուր յայտարարի վերածենք, զանոնք հաւասար պիտի դանենք սա կոտորակներուն $\frac{9}{18}$, $\frac{6}{18}$ և $\frac{2}{18}$։ Անոնց գումարն է $\frac{17}{18}$. այնպէս որ բաժնուելու գումարն ինչ թիւ որ ըլլայ, 3 որդիքը պիտի առնեն այն գումարին $\frac{17}{18}$ը, և մնացորդը նոյն գումարին $\frac{1}{18}$ը, կամ տղոց տրուած գումարին $\frac{1}{17}$ը պիտի ըլլայ։ Արդ դիտենք որ, երբ դատաւորը մեռնողին լիրաներուն գումարին վրայ 5 լիրա աւելցնելով գումարը բաժնեց կտակին համեմատ, 5 լիրա մնացորդ աւելցաւ։ Ասկէ կը տեսնուի թէ 5 լիրան դատաւորին բաժնած գումարին $\frac{1}{18}$ն է, և կտակին համեմատ որդւոյը ինկած բոլոր բաժիններուն ալ $\frac{1}{17}$ն է։ Եւ որովհետև 18 անգամ 5 կ'ընէ 90, և 17 անգամ 5 կ'ընէ 85, 90ը ըստ կտակին բաժնելով $\frac{1}{2}$ը պիտի ընէ 45, $\frac{1}{3}$ը պիտի ընէ 30, և $\frac{1}{9}$ը պիտի ընէ 10. ամէնը մէկէն, 45, 30 և 10, կ'ընէ 85, որ 90էն հանուելով կ'ունենայ մնացորդ 5։ Ուստի ժառանգներուն առաջինը 45 լիրա առաւ, երկրորդը 20 լիրա, երրորդը 10 լիրա, և դատաւորին աւելցուցած 5 լիրան ալ անոր ձեռքը մնաց։

Երեք անձինքներէ մեզի այս խնդրոյն լուծումը ղրկուեցաւ, այսինքն Բոպէրթեան վարժարանին երկու աշակերտներէն, և Օրտուի դպրոցի աշակերտ Պետրոս Անդրէասեանէն. երեքին ալ պատասխանը վերի պատասխանին համաձայն էր, միայն դործողութիւնը քիչ մը տարբեր կերպով եղած էր։

ՀՐԷԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Օր մը Աբրահամ իր սովորութեանը համեմատ իր վրանին դուռը նստած և հիւր ընդունելու սպասած ժամանակը, խոր ծերութեան հասած հա-

բիւր տարեկան անձ մը տեսաւ որ ճամբորդութենէն յոգնած, մէջքը ծռած, և իր գաւազանին վրայ ինկած դէպ իրեն կու գար։ Աբրահամ զանիկա սիրով ընդունեց, անոր ոտքերը լուաց և սեղան պատրաստելով բազմեցուց զանիկայ. բայց երբ տեսաւ որ Ծերունին առանց Աստուծոյ օրհնութիւնը խնդրելու կը ճաշէր, Աբրահամ անոր առ Աստուած աղօթք չընելուն պատճառն հարցուց։ Ծերունին ալ յայտնեց անոր թէ ինքը միայն կրակապաշտ մ'ըլլալով կրակէն ուրիշ աստուած չի ճանչնար։ Ա՛ս պատասխանին վրայ Աբրահամ այնպէս զայրացաւ որ դուրս վռնտեց Ծերունին իր վրանէն և այսպէս դիւերուան բոլոր նեղութեանը ենթակայ ըրաւ զանիկայ։

Ծերունին երթալէն ետքը Աստուած կանչեց Աբրահամն ու հարցուց անոր թէ ո՞ւր է իր հիւրը։ Աբրահամ պատասխանեց թէ «Բեղի երկրպագութիւն չընելուն համար վռնտեցի զանիկայ»։ Աստուած ալ ըսաւ անոր «Անիկա թէև դիս չպաշտեր, այսու ամենայնիւ ես 100 տարի երկայնամիտ եղայ անոր, դուն չկրցա՞ր անոր մէկ դիշեր մը համբերել»։

ԹՇՆԱՄԻՆ ԻՆՉՊԷՍ ՉԻՆԱԹԱՓ ԸՆԵԼՈՒ Է։

Կ'ըսուի թէ մարդ մը երթէ իր մարմնոյն վրայ մեղը քսելու ըլլայ, մեղուն զանիկա չխայթեր։ Ուստի փեթակի հետ գործ ունենալով կամ վայրի մեղուներու բոյն մը աւրել ուզելով ասիկա փոքր կենդանիներէն խայթուելու վտանգին մէջ եղողներն, եթէ իրենց ձեռքին և երեսներուն մեղը քսեն, յիշեալ վտանգէն կը պահպանուին։ Մենք ալ եթէ բռնաւոր և չարակամ անձանց անարգանքէն, հալածանքէն և չարիքներէն նեղութիւն կրենք, անոնց այս չարիքներէն պահպանուելու համար ամենէն աղեկ միջոցը հոգիներս մեղրի մէջ թաթխելն է, այսինքն ամէն կերպով հեզութեամբ, քաղցրութեամբ երկայնմտութեամբ և համբերութեամբ վարուիլն է. ասանկով ամենադառն թշնամիոյն մեզ վնասելու համար ըրած բոլոր չանքերն ի դերև պիտի ելնեն։

ՉԻՆԱՅԻ ԿԱՐՈԶԻՆ ՁԱՒԸ

(Ա՛նցած 22 երորդ նոյն ամսոյն և վերջ։)

«Բայց», կ'ըսեն մեզի դէմ առարկողները, «դուք որ ձեր ամսականին դեթ մէկ մասն օտարականներէ կ'առնէք՝ պէտք է որ անոնց չահուն համար աշխատիք»։ Այս առարկութեան կ'ուզեմ անկեղծօրէն պատասխան տալ։ Այո, ես իմ թոշակիս մէկ մասը Միսիոնարաց ընկերութենէն կ'ընդունիմ, և ասոր համար չնորհակալ եմ Աստուծոյ։ Շնորհակալ եմ նաև այն Ընկերութեան և անոր Չինաստան ղրկած Միսիոնարներուն։ Ես Աստուծմէ ետքը անոնց պարտական եմ ոչ միայն իմ թոշակիս մէկ մասը, հապա նաև իմ բոլոր գիտութիւնս Աստուծոյ և Սուրբ Գրոց վրայով, բոլոր գիտութիւնս Քրիստոսի և փրկութեան մեծ գործին վրայով, բոլոր փոքաւութիւնս մեղաց թողութեան և նոր ստեղծուած ըլլալու նկատմամբ, բոլոր ուրախութիւնս Աստուծոյ հետ հաղորդ և սրբոց հետ ընկեր ըլլալուս համար, բոլոր այս վշտալի կեանց մէջ մխիթարութիւնս, մահուան երկիւղին դէմ յաղթութիւնս, և գերեզմանէն անդին փառաւոր անմահութեան մը վրայ ունեցած յոյս։

Անմակաբիս մէկ մասը Միսիոնարաց ընկերութենէն ընդունելուս նկատմամբ երկու դիտողութիւն ունիմ ընելու։ Նախ՝ մեր ընդունած ստակը կամաւոր ընծայ մըն է Ամերիկայի բարեսէր Քրիստոնէից կողմէն, և այս չնորհքին հետ ամենևին պայման մը կամ գաղտնի նպատակի մը ծառայելու պարտաւորութիւն չկայ. ստակը տուողներուն մի միայն նպատակն է մեզի օգնել որ մեր հայրենակիցներուն Աւետարան քարոզենք։ Երկրորդ՝ Ամերիկայի Քրիստոնեաներէն մեր ընդունած օգնութիւնը ներկայ կարօտութեան համար է միայն։ Բնիկ եկեղեցւոց պարագն է իրենց հարազիչները պահել. և մօտ է ժամանակը երբ այս եկեղեցիք կարող պիտի ըլլան այսպէս ընելու։ Մեր եղբայրներէն ոմանք կը գանգատին թէ Միսիոնարք կը չանան մեր եկեղեցիներն իրենք զիրենք հոգալու դիրքը բերել։ «Մենք», կ'ըսեն գանգատող եղբարք, «դեռ մանկունք ենք ի հոգևորս. անհնար է մեզի անձամբ կառավարուելու հոգը մեր վրայ առնուլ. պէտք է որ Միսիոնարական ընկերութիւնները մեր պիտոյքը հոգան. դեռ տղայ եղողներէն չափահաս մարդոց գործքերը պահանջել իրաւացի չէ»։ Այս սխալ տեսութիւնը յառաջ կու գայ խնդիրն աղեկ չհասկնալէ։ Միսիոնարական Ընկերութիւնը մեզի հետ կը վարուի այնպէս՝ ինչպէս որ խելացի ծնողք կը վարուին իրենց զաւկներուն հետ։ Մինչ մենք մանր տղայք էինք։ Ընկերութիւնը մեզ անոյշ վերջին աստիճան քաղցրութեամբ. հիմա որ մեծնալով դէթ պատանեկութեան հասանք, կը պահանջէ որ մեզի համար աւելի բան մը ընենք։ Անցեալ տարուան ճամբորդութեանս մէջ տեսայ որ ամէն տեղ ծնողք իրենց տղոցը գործել տալ կը սկսէին, երբ զանոնք գործ մը ընելու կարող կը տեսնէին։ Խիստ կը թուի տղոցմէ պահանջել արտը փորել, բեռ կրել կամ լեռներէն փայտ ժողվել. բայց այս աշխատութիւնները տղոց չեն վնասեր. ընդհակառակն հաւանականաբար անոնց առողջութիւնը և ոյժը կ'աւելցընեն, և պնդկազմ կ'ընեն անոնց մարմինները և յարմար որևիցէ աշխատութեան ատկալու։ Ամենքս ալ գիտենք թէ չատ անգամ կը պատահի որ հարուստ ծնողաց որդիք անառակ և դատարկապորտ մեծնալով կ'աղքատանան մինչ աղքատ ծնողաց որդիք տղայութենէ աշխատութեան և խստամբերութեան սովրելով հարստա կ'ըլլան։ Եթէ կը փափաքինք որ Քրիստոնէութիւնը հաստատուի Չինաստանի մէջ, պէտք է որ մենք զմեզ հոգալ սորվինք. պէտք է որ անձամբ մեր բարոզիչները պահենք, մեր եկեղեցիները մենք չինենք, մեր տղայոց համար դպրոցներ կազմենք, և այսպէս յուսանենք թէ կը սիրենք զԱստուած և անոր գործը։

Ո՞վ չուզեր ձեռնտու ըլլալ այսպիսի բարի գործի մը։ Ասոր ձեռնամուխ ըլլալու համար բաւական զօրութիւն և հարստութիւն ունինք։ Տերը չանարգեց այրի կնոջ լուման։ Մեզի աւելի հաւատք, աւելի քաջալերութիւն, աւելի եռանդ, աւելի անձնուրացութիւն պէտք է։ Թող իւրաքանչիւր ոք իր ձեռքէն եկածն ընէ. Աստուած անտես չընէ մեր ջանքերը։ Հին ատենը ժողովուրդը յօժարու-

թեամբ կը մատուցանէր իր ոսկին և արծաթը Տէրոյը սպասուն։ Օրհնեալ առանձնաշնորհութիւն մըն է Աստուծոյ գործին համար բան մը ընելու արտօնութիւն ունենալ։ Ապա ուրեմն ձեռնամուխ ըլլանք ամէնքս ալ այս գործին՝ Աստուծոյ օրհնութիւնը խնդրելով։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մայիս 24 րոս Յունացց, եւ Յունիս 5 րոս Լաս. 1872։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Պոլիս հրատարակուած Լէվանթ Թայմզ անուն Անգղիերէն լրագրին խօսքին նայելով Մեծ եպարքոսը հրաման զրկած է Գաւառաց կուսակալներուն, պատուիրելով թէ այսուհետեւ ամէն քաղքի և գիւղի մէջ հարկերու հաշուեատումարներ բռնելին, և թէ հարկ վճարողներուն կնկալագիրներ տրուին հարկաժողովներուն կողմէն, որպէս զի արդէն վճարուած հարկ մը նորէն պահանջելու փորձերուն առաջն առնուի։

— Նոյն լրագիրը կ'ըսէ թէ Ղալիպ Պէյ Տրապիզոնի կուսակալութեան պաշտօնն ընդունած և իր տեղը դացած է։

— Զմիւռնիոյ Կուսակալ Համի փաշան Դանուբի գաւառին Կուսակալ, Գանձուց Նախկին պաշտօնեայ Սատըգ փաշան Զմիւռնիոյ Կուսակալ, Դանուբի գաւառին Կուսակալ Ռասիմ փաշան Շորգի Գարա-Հիսարի Սանճագին կառավարիչ, և Կայսերական բանակի երկրորդ զօրաբաժինին նախկին հրամանատար Մէհմէտ Ռէֆեթ փաշան Սմառիոյ և Ջանիպի միացեալ Սանճագներուն կառավարիչ անուանեցան։

— Բանի մը տարի առաջ Պոլսոյ մէջ Անգղիոյ Տէրութեան կողմէն դեսպանութեան պաշտօն վարող և եղբը Լօրտ Տալլհունկ և Պուլվըր տիտղոսն ընդունող Սըր Հէնրի Պուլվըր մեռաւ Իտալիոյ Նափոլի քաղաքը սրտի հիւանդութենէ մեռած է։

— Մէքքէական Թըպպիյէ կոչուած բժշկական գպրոցին մէջ հիմա 160 աշակերտ կը գտնուի, այսինքն՝ Մահմետական, Յոյն, Հայ և Հրեայ։ Ամենէն յառաջադէմ դասը կը բաղկանայ 30 հոգիէ, որոնց մեծ մասը Մահմետական և Յոյն են։

— Կ'ըսուի թէ Կաթոլիկ Հայոց նախնի Պատրիարքին Հասունեանի կուսակիցները, պնդելով թէ չեն կրնար հաղորդութիւն ընել նորընտիր Պատրիարքին հետ, աղերսագիր մը պատրաստած են, ուր կը խնդրուի Կառավարութենէն որ Թիլքիեանը ճանչնայ իրենց պատրիարք։

— Օտեսա գանուող Պուլկարք 2500 անգղիական լիրայի գումար մը հանգանակած են իրենց նորընտիր Էկզարքին եպիսկոպոսական զգեստներ չինել տալու համար։

ԵՒՐՈՊԱ

Անցեալ Հինդշաբթի Լօնտոնի քաղաքապետին նախագահութեամբը յիշեալ քաղաքը մեծ ժողով մը եղաւ, մտերս Բուքանիոյ մէջ Հրէից եղած թշնամանաց դէմ բողոքելու, և Անգղիոյ կառավարութեան միջամտութիւնը խնդրելու նպատակաւ։ Ինը-պատս Հրէից, Ա.յս ժողովքին ներկայ էին հազարէ աւելի անձինք, որոնց մէջ կային Լօրտեր և եպիսկոսներ, Խորհրդարանի անդամներէն 40ի չափ անձինք և Լօնտրա բնակող Բրիտանեայ և Իսրայէլացի մեծ վաճառականներ։ Միաբան հաւանութեամբ որոշուեցաւ բողոքել այն թշնամանաց դէմ իբր անվայել արդի քաղաքակրթութեան և արդարութեան, և խնդրել որ թէ այն թշնամանքէն ձնաուած եղկելիներուն հասուցում ըլլայ, և թէ աղգու պաշտպանութիւն մատուցուի Բուքանիոյ Հրեաներուն ապագայ յարձակմանց դէմ, արդէն եղած դաշնադրութեանց համեմատ անոնց քաղաքային իրաւանց հաւասարութիւնը երաշխաւորելով։ Ուրիշ որոշումներ ալ ըլլալէն եառքը, ընորհակալութիւն մատուցուեցաւ Անգղիոյ կառավարութեան յիշեալ դէպքին մէջ օգնութիւն ըրած ըլլալուն համար, խնդրուեցաւ նաև որ բաղձացեալ նպատակին հասնելու համար կառավարութիւնը ուրիշ տէրութիւններն ալ հրաւիրելով անոնց հետ մէկտեղ միջնորդութիւն ընէ Բուքանիոյ կառավարութեան քով։

ԱՄԵՐԻԿԱ

Նիւ Եորքէն եկած Հեռագրոյ մը խօսքին նայելով Ամերիկայի Միացեալ Նահանգաց կառավարութիւնը, Ալապամայի խնդրոյն նկատմամբ եղած դաշնադրութեան մէջ Անգղիոյ կողմէն առաջարկուած յօդուածն ալ ընդունելու հաճութիւն տուած է։

— Ա.յս տարի Ամերիկայի Միացեալ Նահանգացմամբ նոր Նախագահ մը պիտի ընտրուի, որուն պաշտօնին ժամանակը պիտի սկսի առաջիկայ տարուան Մարտի 4ին։ Հասարակապետականաց մէկ մեծ մասը հաւանակա. նաբար այժմու Նախագահին կրանթ զօրապետին համար քուէ պիտի տայ։ Նոյն կուսակցութեան մէկ մասն ալ անկէ գոհ չըլլալով որոշած են «Նիւ Եօրք Թրիպիւն» անուն Նիւ Եօրք տպուած ազդեցութեան տէր լրագրին խմբագրին Մր. Կրիլլիյի տալ իրենց քուէն. իսկ ռամկապետական կուսակցութիւնը դեռ ընտրելի մը որոշած չէ։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տօգթօր Ց. Պասեան հայազգի բժիշկը Ամերիկայի Զիքակօ քաղաքին մէջ Դասական բժշկութեան ընթացքը լրացուցած և Մըրսի հիւանդանոցին մէջ ատեն մը իւր արհեստը գործադրելով, Բժշկութեան, Վիրաբուժութեան և Դահեկութեան վերաբերեալ գործողութեանց նկատմամբ բաղմայ յարգանքն ու համարումն առ ինքն ղրաւելէն յետոյ, Մեծ. Տօքթօրը առ այժմ քաղաքս հասած, Բերա՝ Ճուլեան փողոց, թիւ 11 տունն բնակութիւնը հաստատած է արհեստը հոս ալ գործադրելու, և ամէն Ուրբաթ կէս օրէն վերջ իրեն դիմող զամէն ախտացեալք ձրիապէս կ'ընամէ։

Ց. Տ° ՄԿՐՏԻՉԵԱՆ

Կ. Պոլիս 1872 Յունիս 3։

ՇՈՒԿԱՅԻ ԳԻՆԵՐ

			Դուրուշ
Ագիւան		օխ.	260—265
Բամբակ, Կէյվէ		օխ	10—10½
» Ատանա		»	9½—10
Թիֆթիկ Էնկիւրիւ		»	28—50
Ձէյթի		»	19—21
Բուրդ, Անատոլու լուացուած		»	16—16½
» « չլուացուած		»	10—10½
» Բումէլի լուացուած		»	17—17½
» » չլուացուած		»	10½—11
Ցորեն կարծր Բումէլի		քոմը	29—32
» » Անատոլու		»	27—30
» կակուղ Բումէլի		»	27—30
Պղպատ		անտ.	220—230
Թիթեղ	զոյգ	»	330—340
Պղպեղ սեւ		օխ.	10—10½
Երկաթ Անգղ. գաւազան.		կենդինարը	80—85
» » Թիթեղ		»	90—95
Շաքար փոշի		կենդ.	240—246
» գլուխ		»	290—295
Խանվէ	100	օխ.	960—1200
Ամերիկայի Բէթրւլի իւղ.		անտուկը	80—8

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՒՈՒՆԱՑԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷՆ
Խմբագիր Ե. Պլիս.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Զագմագճըլար փողոց, Յակոբեան Խան Թիւ 12